

որ իւր անկանոն երգերով կը համարձակի քան զինքն աւելի քաջ երաժիշտները սրբազրել, և պատգամ տալ բոլոր երաժիշտ թըռչնոց առանց շիկնելու. վաշ ինքնահաւանութեան:

Յետ յիշելու և նկարագրելու մեր երկրի նշանաւոր երաժիշտները, քիչ մ'ալ քննենք թէ կան արդեօք երաժիշտ հաւիկներէն զատ՝ ուրիշ մեծամարմին բնաշխարհիկ հաւեր: Անշուշտ կան և շատ բազմութիւնք են, զորս սիրով առանձինն պիտի նկարագրէինք, եթէ պատմիչք անոնց բազմութիւնը մեզ աւանդելէն վերջը, գէթ անոնց անուններն ալ յիշատակած լինէին. բայց ափսո՛ս որ մի քանի թռչուններու անունները տալէն վերջը՝ անդէն անոնց բազմութիւնը կը յիշեն և լակոնական ոճով մը կը գոցեն իրենց նկարագրութիւնն: Փարպեցի մը լոկ ունիմք ի նախնեաց որ հազիւ ծագիւ մատին կարեւորութիւն տուած է մեր աշխարհի թռչնոց և կենդանեաց, և ցաւալին այն է որ և սա Կաքաւ մը, Սարամը մը և Ագար մը յիշելով կը բաւականանայ, և անդէն կցելով «և կամ այլ բազում և անհամար ցամաքայնոցն և ջրայնոցն ջոկք թռչնոցն»*, կը վերջացնէ իւր կենդանագրութիւնը:

Բայց մենք անցնինք արդ քննել և գտնել, և այլ բնաշխարհիկ թռչուններն. եթէ նոքա արժանի են նկարագրութեան՝ նկարագրենք. եթէ չեն՝ գոնեայ անուններն լոկ յիշենք:

Երբ աշուրնիս օդաբնակ երաժիշտներէն վար կ'առնու՞մք՝ սակաւ մի ևս ջրային և ցամաքային բնաշխարհիկ հաւեղինաց հետ զբաղելու, անդէն մեր դիմացն կ'երևէ խմբեակ մը սգատեսիլ մեծամեծ թռչնոց. մի՞ գուցէ Տապանէն դուրս մնացած՝ թափառելով իրենց ոտից և թռիչներուն՝ դադարիկ մը կ'որոնեն. տղեղ են դիմօք, բարուք և ձայնով պփղալի:

— Սղաք են Աղուաք պիղծ համարեալ ի Մովսիսէ, սրբազան՝ ի Շուետաց, որք ջերմ սիրով դեռ կը գուրգուրան այս զազրատեսիլ թռչնոց վրայ: Հեթանոսք՝ ամէն մարդարէութիւնք կ'ընծայեն ասոնց. եթէ սղաք ձախ

րեն դէպ ի ձախ, դա ձախորդութեան նշան է, իսկ եթէ յաջ՝ յաջողութեան:

— Մտիկ ընենք՝ թէ դիցարանք ի՞նչ ծաղրական յիշատակութիւն ունին Աղուաին վրայ:

Հեթանոսք զայս Ապողոնի նուիրած էին, խորամանկ թռչունը Կորոնիսեայ անհաւատարմութիւնը Ապողոնի կը մատնէ, սա անդէն զայրացած՝ կը սպաննէ զԿորոնիս սիրուն հին. բայց յետոյ ստրկանալով, սպիտակափայլ ագռաւը կը մրտտէ սև փետրովք:

Անիի մեծ չափարանն այլ ասոր նման ուրիշ առասպել մը կը պատմէ.

— «Յառասպելս հեթանոսաց՝ Ագռաւ երբեմն սիրելի Ապողոնի վասն սպիտակն գոլոյ, այլ յետոյ փոխեալ ի սևութիւն. և վասն յամելոյն ի բերել ջուր՝ փոխադրեալ յաստեղս ի ներքոյ աստեղատան Ափեժոյն և Կուսին՝ դէպ յըմպանակն առ տառմը վիշապին» —

— Ի Հայս ամէն գաւառաց և քաղաքաց մէջ՝ կան անբաւ բազմութիւնք ագռաւներու, ո՛չ մէկ տեսակ՝ այլ շատ. և ամէնն առանձին աշուռամբ կը կոչին օրինակի համար Որի, Ճայ, Որի սերմանաքաղ, հասարակ Ագռաւ, Կաչաղակ, Անծեղ, յետինս ընդելանալով կը խօսի մարդկանց բարբառով և կը կոչէ իւր տէրը անուամբ՝ զարմանալի կերպով:

Սերաստիոյ կողմերն Հայ ագռաւը թուրթակաց պէս շարունակ շաղակրատելով կը զուարճացնէ զՍերաստացիս: Զմեռ ատեն այս կողմերն կը զաղթեն անբաւ տեսակ ագռաւներ. նմանապէս զարնան եղանակին ուրիշ խումբ մի ագռաւներու այս տեղ կը զաղթեն, բնակիչք զանոնք իրենց պատուական կերակուր կ'ընեն:

Սերաստիոյ Ագռաւներէն զատ՝ ի Հայս Վանայ կողմերն ամէն տեսակ խոշոր Ագռաւներ կը զանուին: Եւրոպացի ճանապարհորդն Վիթալ Քինէ կը գրէ՝ որ Ագռաւք Վանայ համար շատ օգտակար թռչուններ են, վասն զի շարունակ կը յափշտակեն կը վերցընեն քաղաքին մէջ մնացած նեխեալ կենդանեաց զիակներն, որք համաճարակ հիւանդութեանց ամենազգու պատճառք կը համարուին:

— Վանեցիք Շուետաց հետ թող երախտագէտ ըլլան այս սև հաւերուն, որոնցմով առողջ կեանք մը կ'անցընեն:

Շարաշարեղի

* Փարպեցի էջ 26:

